նում առանց միայն այսօրուան «Ինքնավար Ղարաբաղ»ի կ'անէ 496 հազար (307 հազար Վրաստանում եւ 189 հազար Ատրբէջանում)։

Ասել է՝ կլոր հաշուով Անդրկովկասի ½ միլիոն հայութիւնը այսօր դուրկ է ուեւէ ինքնավար իրաւունքից։ Դա անում է ամբողջ անդրկովկասի բնակչութեան դրեթէ 9 տոկոսը։ Իսկ եթէ առհասարակ Հայաստանից դուրս ապրող հայերի թիւը նկատի ունենալու լինինք (307 հազար+297 հազար=604 հազար), վերջինս կը կազմի Անդրկովկասի ընդհանուր ազգաբնակչութեան 10 տոկոսից աւելին, որ է՝ նոյն երկրամասի (Անդրկ.) հայութեան (1,-333,000) մօտ 45·35 առ հարիւրը։

Թուրք-թաթարները եւս ունին իրենց ազգային իսկական փոքրամասնութիւնները Անդրկովկասից դուրս, թէեւ ոչ այն համեմատութեամբ, ինչ որ հայերը։ Նախկրայը ընդհանուր սահմաններ չունենալով իսկ Ատրբէջանի հետ, վերջինիս մի ինքնավար շրջանն է։ Վրաստանում ապրող թուրք-թաթարների ընդհանուր թիւն է, համաձայն 1926-ի վիճակագրութեան (չհաշուած, ի հարկէ, աջարացիներին), 198 հազար եւ կամ ողջ ազգաբնակչութեան 5·2 առ հարիւրը։ Դրանք գլխաւորապէս ապրում են Ախալցխայի, Բորչալուի եւ Թիֆլիսի գաւառներում։ Տեղ-տեղ կազմում են այս կամ այն շրջանակի բնակչութեան մեծամասնութիւնը։ Հայաստանի սահմաններում ապրող թուրք-թաթարների թիւը մօտ 90 հազար է եւ կամ ողջ բնակչութեան 10 տոկոսից քիչ աւելին։

Վրաստանում եւ Հայաստանում, միասին առած, ուրեմն ապրում են 288 հազար թուրք-թաթարներ։ Դա անում է Անդրկովկասի թուրք-թաթար ցեղի ամբողջական թուի (1,-652,000) 17 տոկոսից աւելին եւ կամ Անդրկովկասի ողջ բնակչութեան մօտ 5 տոկոսը։

Բաղդատութեան դնելով մի կողմից հայերին եւ միւս կողմից թուրք-թաթարներին վերաբերող վերոյիշեալ թուերը, տեսնում ենք ուրեմն, որ մինչդեռ թուրք-թաթար փոքրամասնութիւնները — ներկայիս վիճակը նկատի ունենալով — Անդրկովկասի ազգաբնակութեան հաշիւ 5 տոկոսն են կազմում, հայերը, ընդհակառակը, 10 տոկոսից էլ աւելի են։ Ինքնին աննպաստ պարագայ մեզ համար։

Միւս կողմից՝ մինչ Անդրկովկասի հայութեան 45·35 առ հարիւրը Հայաստանի սահմաններից դուրս է ապրում, լինելով արուեստականօրէն իր երկրից դուրս առնուած, նոյն յարաբերութիւնը Ատրբէջանից դուրս գտնուող թուրք-թաթարների համար արտայայտւում է ընդամէնը 17 առ հարիւրով։ Պատկերը ուրեմն այստեղ եւս շատ անմխիթարական է մեզ համար։

Ինչ վերաբերում է վրացիներին, այնչափ աննշան է նրանց թիւը իրենց երկրից դուրս, Հայաստանում եւ Վրաստանում, որ յիշատակութեան իսկ արժանի չէ այս կապակցութեան մէջ։ Նշանակում է՝ փաստօրէն վրացական ազգային փոքրամասնութիւն գոյութիւն չունի Անդրկովկասում։ Բախտաւոր վիճակ, ազգային-պետական եւ առհասարակ ամէն տեսակէտից։

* * *

Ազգային փոքրամասնութիւններ ունին, բացի յիշեալներից, նաեւ ցեղագրական ուրիշ տարրերի, թէեւ շատ փոքր չափով միայն—եզիտիներ, քրդեր, ասորիներ, պարսիկներ, այլ եւ իրենց ազգային հողամասից դուրս ապրող փոքրաթիւ վրացիներ, լեռնականներ, եւ ուրիշ ժողովուրդներ։

Ի՞նչ թիւ են կազմում ուրեմն, բոլոր ազգային փոքրամասնութիւնները միասին, Անդրկովկասում.

Ա. ԽՈՒՄԲ

	1000-ական		% Անդրկ. Բնակչ.
1. Ռուսներ՝	336	կամ	5·75%
2. Յոյներ՝	57	կամ	0·99%
3. Հրեաներ՝	30	կամ	0·52%
4. Եւրոպ. ցեղեր՝	68	կամ	1·15%
Գումար՝	491	կամ	8·41%

Բ. ԽՈՒՄԲ

	1000-ական		% Անդրկ. Բնակչ.
1. Հայեր՝ (առանց Ղարաբաղի)	496	կամ	9%
2. Թուրք-թաթար՝	288	կամ	5%
Գումար՝	784	կամ	14%